

Ռ. Գ. Օսյան

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ ԱԿՆՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ակնոցների հայտնաբերման գյուտը պատկանում է մեծագույն գյուտերի շարքին. սակայն նրանց ստեղծողները պատմության մեջ մնացել են անհայտ. իսկ արտագրման վայրը՝ ենթադրելի: Այս է պատճառը, որ ամեն մի մատենագրական աղբյուր, կամ ապակու, հախճապակու, կավանոթի ուսումնասիրություն, որն այս կամ այն չափով լուսաբանում է այդ հարցը, իրենից մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Ակնոցները, ամենայն հավանականությամբ, ստեղծվել են 13-րդ դարի վերջերին՝ Իտալիայում: Վենետիկ քաղաքի ապակեգործության բարձր արվեստը մտածել է տվել, որ հենց այնտեղ էլ պետք է պատրաստված լինեն առաջին ակնոցները: Ակնոցն սկզբում օգտագործվել է որպես մեկ խոշորացնող ապակի, կարդալու, գործելու, նուրբ աշխատանքներ կատարելու համար. հետագայում կիրառության մեջ են մտել զույգ սպակիներով ակնոցները. որոնք պահվել են աչքերի առջև: Այնուհետև ամբողջ դարեր են անցել մինչև կատարելագործվել են ակնոցներն ու նրանց շրջանակները:

Պոլիակն իր աշխատությունում\* բերում է մի շարք հեղինակների տրվյալներ, որոնց թվում և Hunain ibn Yshak-ի աչքի անատոմիական տվյալները սխեմատիկ պատկերով, որի արտագրված նկարագիրը վերագրվում է 1197, բնագիրն՝ ավելի վաղ տարեթվերին:

Maurolycus-ը (1494—1577) ըստ Avizonis-ի, առաջինն էր, որ աչքի ոսպնյակը համեմատել է երկուռուցիկ ապակու հետ և համոզվել, որ ոսպնյակում ճառագայթները բեկվում են դեպի նրա առանցքը:

Kepler-ը (1571—1630) ուսումնասիրել է երկուռուցիկ ապակուց անցնող ճառագայթների բեկման օրենքները: Ըստ հելինակի, արտաքին աշխարհից՝ առարկայից, եկող ճառագայթները բեկվելով եղջրենում և ոսպնյակում, հավաքվում են ցանցենու վրա, առաջացնելով առարկայի պատկերը հակառակ դիրքով: Հետագայում հոլանդացի գիտնական Donders-ը (1818—1880) աչքը դիտում է որպես օպտիկական բարդ ապարատ. բացի այդ գիտականորեն ցուցադրական է դարձնում աչքի նորմալ ֆիզիոլոգիական հատկություն՝ ակկոմոդացիայի (համակերպման)<sup>1</sup> տարբերությունը ռեֆրակցիայից (բեկունակությունից)<sup>2</sup>: Նրա և Հելմհոլցի ուսումնասիրությունները հնարավորություն ստեղծեցին լայն կիրառության մեջ դնել ակնոցների օգտագործումը: Աչքերը արևի ուժեղ ճառագայթներից, փոշուց կամ մեխանիկական վնասումներից պաշտ-

\* S. I. Polyak, The Retina, Chicago, 1943.

<sup>1</sup> Աչքի այն հատկությունն է, որի շնորհիվ հնարավորություն է ստեղծվում լավ տեսնելու տարբեր հեռավորություններում գտնվող առարկաները:

<sup>2</sup> Նոսքը կարճատեսության, հեռատեսության և աստիգմատիզմի մասին է:

պանելու համար 17-րդ դ. սկսվում են օգտագործվել պաշտպանողական ակնոցներ, կանաչավուն, կապտավուն և այլ գույների ապակիներով: Ահա համառոտակի ակնոցների պատմությունը, որը նկարագրում է պրոֆ. P. Avizonis-ը իր «История очков» աշխատությունում<sup>3</sup>: Պարզ է, որ հեղինակն օգտվելով գլխավորապես եվրոպական գրականությունից, տեսադաշտից դուրս է թողել Կովկասում, առավել ևս Հայաստանում ակնոցների պատմությունը: Այս հարցը լուսաբանելու համար անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել համապատասխան ժամանակաշրջանում Հայաստանի զարգացման, նրա գիտության ու արվեստի առաջընթացի վրա: Ակադեմիկոս Հ. Մանանդյանը 10—11-րդ դարերում հայկական քաղաքների տնտեսական և կուլտուրական վիճակը պարզելու նպատակով ուսումնասիրել է ոչ միայն հայ, այլև օտար աղբյուրների վկայությունները<sup>4</sup>: Նշած ժամանակաշրջանում բազրատունյաց Հայաստանը գտնվել է տնտեսական և կուլտուրական զարգացման բարձր էտապում: Ստեղծված միջազգային նպաստավոր պայմանների շնորհիվ, ավելի քան մեկ դար. «Հայոց աշխարհում» տիրում է խաղաղություն: Գտնվելով աշխարհագրական հարմար դիրքում՝ առաջավոր երկրների ու նրանց ճանապարհների խաչմերուկում, արագ զարգացող առևտրի, տեղական բարձրորակ արտադրության, ինչպես և կրոնի անսահմանափակ իրավունքների թուլացման հետևանքով<sup>5</sup>, արագորեն աճում ու զարգանում են Անի, Դվին, Արծն, Կարս, Վան և այլ քաղաքները: Կառուցվում են հոյակապ կամուրջներ, բերդեր, տաճարներ, ջրմուղներ: Զարգանում է գրականությունն ու գիտությունը, արվեստն ու արհեստները: Վ. Աբրահամյանը նշում է, որ Հայաստանում 9-ից 13-րդ դդ. գոյություն են ունեցել արտադրական և ոչ արտադրական 105 արհեստներ<sup>6</sup>: Նրկրի զարգացումն այնպիսի մեծ թափ է ստանում, որ 11-րդ դարում սելջուկների արշավանքները և Հայաստանի անկախ թագավորության կորուստն անգամ, չեն կասեցնում այդ արագ վերընթացը<sup>7</sup>:

Նկարագրվող ժամանակաշրջանում գոյություն ունեցող հունարեն և արաբերեն բժշկական աչքի ընկնող գրքերի թարգմանություններից բացի, գրվում են հայերեն բազմաթիվ ինքնուրույն աշխատություններ, որոնցից մի քանիսը թարգմանվում են եվրոպական տարրեր լեզուներով: Այդ աշխատություններից շատերը հասել են մեզ արտագրությունների հետևանքով ձևափոխված, այլ հեղինակների մեջբերումների կամ պատառիկների (Ֆրագմենտների) միջոցով: Հիշյալ հեղինակների շարքին են պատկանում Մխիթար Հերացին<sup>8</sup>, Ներսես Լամբրոնացին ու Աբու Սաիդը, որոնք նկարագրել են մարդու անատոմիան. Գրիգոր Մագիստրոսը, Ահարոնը, նրա բժիշկ որդիներ՝ Ստեփանոսը, Չոշլինը և Միքայելը, Գրիգորիս բժշկապետը<sup>9</sup> և շատ ուրիշներ: Բժշկությունն այնքան է զարգանում, որ բացվում են մասնագիտացված հիվանդանոցներ, բժշկական

<sup>3</sup> P. Avizonis, История очков, Архив офтальмологии, 1926, т. 2, № 1—3.

<sup>4</sup> Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան, 1940.

<sup>5</sup> Բնորոշակեցիների շարժման հետևանքով.

<sup>6</sup> Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում, Երևան, 1956.

<sup>7</sup> Орбели, Развалины Ани, Петербург, 1911.

<sup>8</sup> Мхитар Гераци, Под ред. Л. А. Оганесяна, Утешение при лихорадках, Ереван, 1955.

<sup>9</sup> Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց, աշխատասիրությամբ Ա. Կժոյանի, խմբագրությամբ Լ. Խաչիկյանի, Երևան, 1962.

դպրոցներ, բուժման նպատակով օգտագործվում են հանքային ջրեր. պատ-  
րաստվում են զանազան դեղորայք: Բաղնիքների և այլնի կառուցման շնորհիվ  
բարելավվում է բնակչության սանիտարական վիճակը: Ա. Կծոյանը, իր աշ-  
խատություններից մեկում<sup>10</sup> հետաքրքիր մեջբերումներ է կատարում մատենա-  
դարանում գտնված բժշկագիտական № 453 ամհայտ հեղինակի ձեռագրից:  
Այդ ձեռագիրը, որ Կծոյանը վերագրում է 12—13-րդ դդ., պարունակում  
է նաև «մարդու բնության մասին» խորագիր կրող տեքստը: Անհայտ հեղի-  
նակը ցայտուն օրինակներով բացատրում է, որ մարդու ուղեղը ընկալում և  
ճանաչում է արտաքին աշխարհում գտնվող առարկաները հինգ զգայարան-  
ների միջոցով, որոնցից առաջնությունը տալիս է աչքին. սակայն նա այստեղ  
չափավոր է և շարադրում է իր մտքերը հետևյալ կերպ. «Այն, ինչ տեսնում է  
աչքը, ճանաչում է բանականությունը (գլխուղեղը—Ա. Կ.): Գլխուղեղը չի կա-  
րող աչքի համար ծառայող օրգան հանդիսանալ, որովհետև այն, ինչ ճանաչում  
է ուղեղը, աչքը չի կարող տեսնել և ճանաչել»: Մատերիալիստական հայացք-  
ների տեր այս հեղինակը, աչքի աշխատանքը սերտորեն կապում է ուղեղի գոր-  
ծունեության հետ և սակայն նրանց ֆունկցիաները հստակորեն տարբերում է  
միմյանցից: 13-րդ դարի մատենագիր Հովհաննես Երզնկացու տեղեկություն-  
ների համաձայն<sup>11</sup> հայ նշանավոր բժիշկները հնարավորություն են ունեցել  
անատոմիան ուսումնասիրել նույնիսկ կենդանի մարդուն վիրահատելու մի-  
ջոցով. այդ նպատակի համար տրամադրում էին մահվան դատապարտված  
հանցագործներին: Կենդանի մարդու և դիակի հյուսվածքների ուսումնասիրու-  
թյունը մեծ ասպարեզ է բացում ճանաչելու մարդու օրգաններն ու նրանց գոր-  
ծունեությունը: Այստեղից շատ բնական է 12-րդ դարում ապրած, բազմա-  
կողմանիորեն զարգացած Մխիթար Հերացու դատողություններն աչքի անա-  
տոմիան նկարագրելիս. նա գրում է՝ «Ոսպնյակն ունի կլոր ձև, նա ընդունում  
է լույսի ճառագայթները և փոխանցում առարկայի պատկերը հակառակ դիր-  
քով»: Այսպիսով, եղրակացնում է պրոֆեսոր Բ. Մելիք-Մուսյանը, «Ոսպնյակի  
օպտիկական ֆունկցիան Մխիթար Հերացու մոտ ստանում է էլեմենտար տես-  
քով, ճիշտ մեկնաբանում<sup>12</sup>—Այստեղ արժեքավորն այն է,—ավելացնում է  
ակադեմիկոս Լ. Հովհաննիսյանը<sup>13</sup>,—որ «Եվրոպական գիտության մեջ աչքի  
օպտիկական հարցերի ճշգրիտ լուծումը կատարվել է Կեպլերի (17-րդ դ.) և  
ապա Շեյների աշխատություններում», իսկ մինչ Կեպլերը Ամիրդովլաթ  
Ամասիացին (1414—1496) «Օգուտ բժշկության» աշխատությունում նկարա-  
գրում է աչքի բազմաթիվ հիվանդություններ, օբյեկտիվ դատողություններ է  
անում աչքի անատոմիայի և ֆիզիոլոգիայի վերաբերյալ<sup>14</sup>: Նա գրում է<sup>15</sup>.  
«Որպեսզի սովորողները պարզ պատկերացնեն ճառագայթների ընթացքը աչ-

<sup>10</sup> К ц о я н А. С., Физиологические воззрения армян-врачей в эпоху расцвета фео-  
дальных отношений, Известия, т. 10, № 5, 1957.

<sup>11</sup> Լ. Խ ա շ ի կ յ ա ն, Գիտահրձուժը հին Հայաստանում, «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ ԳԱ  
հասարակական գիտութ., № 4, Երևան, 1947, էջ 83—90:

<sup>12</sup> Б. Н. Мелик-Мусьян, Глаз и зрительный нерв по манускриптам врачей  
армян XII—XV веков, Сб. науч. трудов Матенадарана, стр. 29—36, № 2, Ереван, 1950.

<sup>13</sup> Л. А. Оганесян, История медицины в Армении, т. 2, стр. 136, Ереван, 1946.

<sup>14</sup> Ա մ ի Ր զ Ո Վ Լ ա թ Ա մ ա ս ի ա Յ ի, Օգուտ բժշկութեան, խմբագրությամբ Ստ. Մալ-  
խասնացի, Երևան, 1949:

<sup>15</sup> Б. Н. Мелик-Мусьян, там же, стр. 31.

քում, թաղանթներում և աչքի հեղուկում, առարկայի պատկերի ուղղութիւնը կենտրոնական ներվային սիստեմում, բերում էմ հետևյալ նկարը», և բերված նկարում պարզ գծագրված և տեսանելի է, որ ճառագայթները ուսպնյակում բեկվելով փոխել են իրենց ուղղութիւնը և ցանցենու վրա տվել առարկայի պատկերը: Բ. Մելիք-Մուսյանը այս հանգամանքը համարում է ուշագրավ, որովհետև ցանցենու ֆունկցիայի մասին առաջին անգամ տեղեկութիւն է տվել միայն Լեոնարդո Դա Վինչին 16-րդ դարում, այսինքն Ամիրզովլաթից ավելի քան տասնյակ տարիներ հետո:

Ակադեմիկոս Ն. Մառի կողմից կատարված Անի քաղաքի պեղումները պատմական անգնահատելի գանձարան են՝ հասկանալու և ճանաչելու հայ և նրա հարևան ժողովուրդների անցյալը, նրանց կուլտուրան ու զարգացման աստիճանը՝ միջին դարերում. անհրաժեշտ է միայն այդ գանձարանի գոհարներից օգտվել ինչպես հարկն է և ոչ թե կախարդական բանալու լոկ ցուցադրումը քավարար համարել ցանկացածը ապացուցելու համար: Անիի և Դվինի պեղումներից հայտնի է դարձել, որ այնտեղ 9—13-րդ դդ. պատրաստվել են ապակյա և հախճապակյա իրեր, որոնք իրենց բարձր որակով գերազանցել են նույնիսկ իրանական նմանօրինակ իրերին: Ապակեգործութիւնն արվեստը և նրա օպտիկական հատկութիւնների ուսումնասիրութիւնը հնարավորութիւն են տվել ապակուց, ըստ պահանջի, պատրաստել բարձրորակ և հասարակ իրեր, զարդարանքներ, պատուհանների թափանցիկ ապակիներ:

Երևանի պետական պատմական թանգարանում պահվող թափանցիկ վճիտ ապակիներից պատրաստված գավաթներն ու սափորները, մեղմ գունավորում տված վազերն ու թասերը, սրվակներն ու բաժակները զարմանք են պատճառում, և ակամայից մոռանում են, որ նրանք պատրաստվել են 9—13-րդ դարերում: Այսպիսով, «Ապակու արտադրութիւնը Հայաստանի քաղաքներում սովորական երևույթ է եղել»<sup>16</sup>: Ինչպես վերևում ցույց տրվեց, 12—13-րդ դարերում առկա է եղել ակնոցներ ստեղծելու բոլոր պայմանները, սակայն, առավել համոզեցուցիչ լինելու համար, դարձյալ դիմենք մատենագրական տեղեկութիւններին:

Սինէական վանքի գրիչ Ֆոանգը 1402 թ. ձեռագրի հիշատակարանում շնորհակալութիւն է հայտնում բոլոր նրանց, ովքեր օժանդակել են իրեն, ի թիվս որոնց նաև Մուրատին և նրա որդիներին, որ օգնել են ձեր հասակում իրեն ամեն ինչով նաև օտար աչքերով (այսինքն ակնոցներով): Նա գրում է. «...և ձեր սուրբ աղոթք օրհնէ զՄուրատն և զիւր որդիքն, որ օգնական է իմ ձերութեանս՝ ի գրել բազում աշխատանօք և օտար աչքս»: Լ. Խաչիկյանը «Օտար աչք» միտքը բացատրում է հետևյալ կերպ—«օտար աչք» գրել նշանակում է օգտագործել ակնոց: Որքան մեզ հայտնի է հայ գրիչներից առաջին անգամ ակնոց է գործածել 1317 թ. Կիպրոսի Կանչուտ վանքում «Մեկնութիւն պատարագի» աշխատութիւնը ընդօրինակած Յովհաննես գրիչը: Իր հիշատակարանում նա հայտնում է հետևյալը. «Եւ զի յաշաց լուսոյ նուազել էի ըստ մարմնոյ, որպես և ըստ հոգոյ. և գտի հայթայթել աչք ապակի, որ ազնական և ղնական վատելոյն, զոր հիացման արժանի է գտողացն, որ են ֆոանկը. և այնիւ աւարտեցի զգիրս: Եւ ամենայն ոք որ ի լուսոյ պակասել է և պատահէ

<sup>16</sup> Ր. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., Երևան, 1958, էջ 256.

ապակույն՝ յոյժ ձեռնտու լինի նմա ի կարդալ և ի գրել, զոր տեսաք յայտնի ի բազումս և փորձի և անձամբ կատարեցաք» (Ձեռագիր Երուսաղեմի № 1141, Մ. Տ—Մ)։

Այնուհետև Խաչիկյանը շնորհակալության արժանի իր աշխատանքում նշում է. «Ակնոցներից օգտվել է նաև 1353 թվականին ընդօրինակված, այժմ պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանի անձնական գրադարանում պահվող ավետարանի 69-ամյա գրիչ Յակոբը։ Նա հայտնում է, որ «վատեալ էր աչքս, եղի աչք, և բազում աշխատանաւք գրեցի վասն փափաքանաց սրտիս»<sup>17</sup>։ Այսպիսով, միանգամայն համոզեցուցիչ է, որ 14-րդ դարում գրագետ հայերից ոմանք օգտվել են ակնոցներից և նույնիսկ իրենց հիշատակարաններում նրանց օգտակար լինելու մասին տվել բարձր գնահատական։ Հետաքրքիր է նաև այն, որ այդ ժամանակ, ակնոցները հայերի մոտ կոչվել են տարբեր ձևերով «օտար աչոխ» (օտար աչքեր), «աչք ալլակի» (ապակե աչք), «Օդի աչք» (դնովի աչք)։ Երևի պետք է ենթադրել, որ ակնոցների ծագումը, ստացումը և վաճառումը կարող էր տարբեր վայրերից լինել։

Անի և այլ քաղաքների պեղումների ժամանակ ակնոցներ չեն հայտնաբերվել։ Հավանաբար, հնում ակնոցներն այնքան հազվադեպ են եղել, որ գուցե նրանցից ոչ մեկը չգտնվի։ Մյուս կողմից, և՛ Մառը, և՛ Օրբելին, և՛ այսօրվա պատմաբանները ընդգծում են, որ միայն Անիում հայտնաբերված պատմական նյութերը այսքան հարուստ են եղել, որ անհրաժեշտ է այն ուսումնասիրության ենթարկել տարիներ շարունակ։

Ավելի քան կես դար լուծ և այժմ մեր ուշադրությանն արժանացած հախճապակյա անոթների բեկորները, որոնց վրա պատկերված են ակնոց կրող մարդիկ, նմանություն ունեն պարսկական անոթներին, այդ պատճառով տեղավորված են Երևանի պետական պատմական թանգարանի 12—13-րդ դարերի, իրանական և տեղական արտադրություն պարունակող ցուցափեղկում։ Այդպիսի նմանությունները թյուրիմացության աղբյուր չդառնալու համար պատմ. գիտ. դոկտոր Ի. Առաքելյանը գրում է. «Անիի և Դվինի ջնարակած խեցեղենի վրա հաճախ հանդիպում են արաբատառ (արաբերեն, պարսկերեն) մակագրություններ, սակայն ինչպես զարդերի միջին-ասիական կամ հյուսիս-իրանականին մոտիկ ձևերը, այնպես էլ արաբատառ մակագրությունները ղեռնա չեն նշանակում, թե այդպիսի խեցեղենը հայկական քաղաքների, նույնիսկ հայ բրուտների արտադրություն չէ»<sup>18</sup>։

Ակադեմիկոս Օրբելին<sup>19</sup> Անիում հայտնաբերված (ՕՑ № 79) հախճապակյա անոթի բեկորները նկարագրելիս նշում է, որ նրանցում պատկերված կինը արծվաքիթ է, իսկ մազերն իջնում են ցած՝ դեմքի երկու կողմերով։ Հեղինակը բավարարվելով դեմքի նշած համառոտ նկարագրով, չի ակնարկում պարզ նկատելի ակնոցների մասին։

Փորձենք ավելի մանրամասն նկարագրել հախճապակյա (ՕՑ № 79 a+b, Անի 357) բեկորների վրա պատկերված այդ ցայտուն նկարը։ Իսկապես, մա-

<sup>17</sup> Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1955, էջ 26։

<sup>18</sup> Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., Երևան, 1958, էջ 251։

<sup>19</sup> И. Орбели, Каталог Анийского музея древностей, выпуск I, Петербург, 1910.

ղերն իջնում են դեմքի կողմերից աջում՝ մինչև կուրծքը, ձախում՝ դեպի ետ թիկունքը, սակայն նրա վերջավորությունը դուրս է մնում բեկորիկից: Մազերը ցածում ավելի են տարածվում: Հոնքերն արտահայտված են աղեղնաձև՝ մեկական գծերով, իսկ աչքերը՝ մեկական կետերով, որոնց վրա նկարված են երկու կլորավուն օղև: Ձախ կողմի օղից կամ շրջանակից ակաճի տեղամասն է ընթանում ոչ բոլորովին ուլիղ գիծ, որը նմանվում է շրջանակից դեպի ակաճն ընթացող ակնոցի քսին (նկ. 1): Շրջանակների միջին՝ քթային մասում, ջնարակը վնասված է և հնարավոր չէ ճշգրիտ որոշել, նրանք այդ մասով, թե գլխին հագցրած զսպանակաձև լարի միջոցով են եղել միացած: Շրջանակների միջից երևում են աչքերը: Դեմքի շափերը մոտավորապես հավասար են 35×30 մմ-ի. գեմքը թեքված է դեպի աջ. ունի հասակավորի գիմագծեր:



Նկ. 1. Անի քաղաքի պեղումների ժամանակ հայտնաբերված, ակնոցավոր մարդու դիմանկար:



Նկ. 2. XI—XIII դարերին պատկանող (Անի 123/778) հախճապակյա անոթի պատկերը:

12—13-րդ դարերին պատկանող այս բեկորները մտածել են տալիս, որ ամենաուշը 13-րդ դարում Հայաստանի (գուցե և նրա հարևան երկրների) արվեստագետները զաղափար են ունեցել ակնոցների մասին և որպես արժեքավոր գյուտ ու թանկարժեք իր, նկարելով նրանց, զարդարել են հախճապակյա անոթների վրա պատկերված՝ մարդկանց: Ակնոցների առկայության նկարագրությունը թերևս համոզեցուցիչ չլիներ, եթե այն մեր փաստերում լինե՞ր միակը<sup>20</sup>:

Այլ հախճապակյա բեկորների վրա (Անի 123/778), որոնցով վերականգնված է անոթի մի մասը, պատկերված է մարդու կերպար, որը նստած է ոտքերը ծալած (ծալապատիկ). աջ ձեռքը դրած ծնկանը, ձախը դուրս է մնում բեկորի կտրված մասից. հագուստը զարդարված, երկար: Մազերն իջնում են դեմքի կողմերից մինչև ուսերը: Հոնքերը արտահայտված են երկուական իրար գրեթե զուգահեռ գծերով: Դեմքի վրա պարզ նկատելի է երկու օղ-շրջանակներ, որոնցից դեպի ակաճն են տեղամասն են ընթանում ակնոցի

<sup>20</sup> Պատմական թանգարանում դտնվող Դվինի նմանօրինակ իրերը, կնկարազրվեն առանձին:

դիրքը ամրացնող հատվածները՝ թևերը: Շրջանակների միջից երևում են աչքերը, որոնք արտահայտված են կետերի ձևով<sup>21</sup>: Դեմքը փոքր ինչ թեքված է դեպի ձախ. ունի երիտասարդի դիմագծեր: Նկարի բարձրությունը հավասար է մոտ 70, լայնությունը՝ 40 մմ-ի (նկ. 2):

Նույն նկարի միևնույն համարի տակ Բ. Ա. Շելկովնիկովը<sup>22</sup> բերում է հետևյալ տվյալները: Հախճապակյա անոթն ունի լայն բերան, դլանաձև է, իսկ ստորին մասում դառնում է կլորավուն: Անոթն ունի փոքրիկ կանթեր:

Ջնարակը անթափանց, մաքուր և հարթ է: Բուսական օրնամենտի մեջ պատկերված է նստած մարդկային կերպար: Անոթի կողում նկարված են վազող ֆանտաստիկ զազաններ, որոնք նման են շան:

Ջնայած Շելկովնիկովը իր գրքում բերում է անոթի լուսանկարը, սակայն չի նկարագրում պատկերված մարդու դեմքը, մազերը. ոչ մի բառով չի ակնարկում հստակ տեսանելի ակնոցների մասին: Պարզորեն հեղինակը իր մըտքերը զարգացրել է այլ ուղղությամբ և անուշադրության է մատնել ակնոցների առկայության շատ կարևոր փաստը: Այսպիսով.

1. Հայ մարդու գործունեությունը 12—13-րդ դարերում այնքան էր ընդարձակվել, որ ակնոցների պահանջը, նրանց օգտագործման ցանկությունը կապված գիր ու գրականության, նաև նուրբ աշխատանքների՝ մանրանկարչության, ոսկերչության, ասեղնագործության և այլնի հետ, ստիպողական անհրաժեշտություն էր դարձել:

2. Գիտության, մասնավորապես բժշկական գիտության զարգացումը, հատկապես աչքի անատոմիայի ու ֆիզիոլոգիայի հետ ծանոթանալը և վերջապես ապակեգործության բարձր արվեստը, նրա օպտիկական հատկությունների ուսումնասիրությունը, ահա հասունացած բոլոր պայմանները, որոնք պետք է անկախ այս կամ այն անհատի հանճարից ուղղեին մարդու միտքը դեպի ակնոցների ստեղծումը:

Իբրևած գրական տվյալները և պեղումներից հայտնաբերված պատկերների ընթերցումը, նույնպես խոսում են այս երկու ենթադրությունների օգտին:

Սույն աշխատանքը նպատակ ուներ նաև ապացուցելու, որ ակնոցները ՍՍՌՄ տերիտորիայում ապրող ժողովուրդներին հայտնի է եղել դեռ 13—14-րդ դդ. և ոչ թե 15—17-րդ դդ. ինչպես նշվում է վերջերս հրատարակված ակնաբուժական ձեռնարկում<sup>23</sup> և բժշկական հանրագիտարանում<sup>24</sup>:

21 Նույն անոթի վերին մասում նկարված է ինչ որ շնանման կենդանի, որի աչքերը նույնպես պատկերված են կետերի ձևով:

22 Б. А. Шелковников, Поливная керамика из раскопок города Ани, Ереван, 1957.

23 Руководство по глазным болезням. Москва, 1962, т. 1, кн. 1, стр. 20—30.

24 Большая медицинская энциклопедия. Москва, 1959, т. 22, стр. 951.

Р. Г. Отыян

**СВЕДЕНИЯ О НОШЕНИИ ОЧКОВ В СРЕДНЕВЕКОВЬЕ****(Р е з ю м е)**

Основываясь на литературных данных, автор приводит сведения, которые доказывают, что в начале XIV в. некоторые из армянских переписчиков книг (гричнер) пользовались очками и даже высоко их оценивали.

Представленные в тексте фотоснимки сделаны с фрагментов фаянсовых сосудов и изображают два человека в очках. Эти фрагменты, обнаруженные при раскопках города Ани академиком Н. Я. Марром, относятся к XII—XIII векам. Ныне они хранятся в Гос. историческом музее Армении.

Приведенные данные свидетельствуют о том, что существующее мнение о появлении очков у разных народов СССР в XV—XVII веках не верно, т. к. очки в Армении (а, может быть, и у соседних народов) имеют более раннюю историю.